

# **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

## **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

### **ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ԽՄՀՄ-ի փլուզմանք հետխորհրդային երկրներում սկսվեցին նոր քաղաքացիավարական (civiliarchic)\* համակարգերի ներդրման ու սոցիալ-քաղաքական ինստիտուտների փոխակերպման գործընթացները: Տնտեսական, սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային գործընթացները ստեղծեցին նոր իրավիճակներ, որոնք հասարակական ինստիտուտներին առաջադրեցին նրացակցության, պայքարի և համագործակցության նոր սկզբունքներ: Հետխորհրդային հասարակությունների համար հատկապես մեծ ազդեցություն ունեցան սոցիալական ոլորտում առաջացած նոր երևույթները, որոնք արմատապես փոխակերպեցին կամ ձևախեղեցին հասարակական հարաբերությունները: Աղքատությունը, գործազրկությունը, հանրային սեփականությունը բաշխելու ժամանակ տեղ գտած անարդարությունն ու անհավասարությունը, սոցիալական շերտավորվածությունը հանգեցրեցին հասարակության կենսամակարդակի կտրուկ անկման, սոցիալական լարվածության ու անվստահության առաջացման: Սոցիալական համակարգի և սոցիալական քաղաքականության սուբյեկտների արդյունավետ գործառության նախադրյալները, մարդու սոցիալական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերը դեռևս գտնվում են կայացման փուլում:

Արևածագը ժողովրդավարությունների քաղաքական համակարգերի կայացմանը համընթաց սոցիալական գործընկերությունը, պատասխանատվությունը, վերահսկողությունը, ապահովագրությունը, սոցիալական ծախսերը, երաշխիքներն ու ներդրումները ձեռք են բերել քաղաքացիավարական նշանակություն: Քաղաքացիական սոցիալական պատասխանատվությունը կայուն զարգացման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ու սոցիալական պետության կայացման առանցքային գործոնն է: Քաղաքացիական սոցիալական պատասխանատվությունը քաղաքացիավարական սոցիալական պատասխանատվության տեսակ է, որն անմիջականորեն կամ միջնորդավորված առնչվում է քաղաքականության սուբյեկտների շահերին ու փոխհարաբերություններին՝ դաշնալով «քաղաքացիների սոցիալական ակտիվության շարժիչ ուժը»<sup>1</sup>:

\* **Ցիվիլիարխիա (civiliarchy - լատ. *civilis* - քաղաքացիական և հում. *archy* - իշխանություն) – քաղաքակիրք և քաղաքացիական իշխանություն, վարչակարգ, վերահսկողություն, լեզիտիմություն:**

<sup>1</sup> **Попов С. А.** Гражданскская социальная ответственность как фактор развития гражданского общества // Гражданскская социальная ответственность как фактор стабильности и прогрессивного развития России: сборник статей по материалам заочной всероссийской научно-практической конференции. М., 2007, с. 6.

Հաշվի առնելով հետխորհրդային հասարակությունների Եվրախնտեգրման գործընթացի առկա վիճակը՝ կարելի է նշել, որ այստեղ առանցքային նշանակություն ունի սոցիալական գործընկերության և պատասխանատվության մշակութային ու արժեքային հիմքերի կայացումը: Դժբախտաբար, հետխորհրդային երկրներում սոցիալական գործընկերությունը դեռևս չի համարվում հասարակական կյանքի ոլորտներում առկա հիմնահարցերի կարգավորման համընդիանուր քաղաքացիավարական ընթացակարգ: Մինչդեռ Եվրախնտեգրման գործընթացում օգտակար կլիներ կիրառել Եվրամիտուրյան սոցիալական երկխոսության փորձը<sup>2</sup>: Անկասկած, ներհամակարգային սոցիալական ինտեգրման ընթացակարգերի ստեղծումը համաշափ կղարձնի նաև Եվրախնտեգրման գործընթացը, որովհետև «Եվրոպական իրավունքի սոցիալ-գոյաբանական հիմքը զարգացած սոցիալական երկխոսության մշակույթն է, որն արտահատվում է ոչ միայն ժողովրդավարական ինստիտուտների, այլև քաղաքացիների արժեքային կողմնորոշումների որոշակի տեսքով»<sup>3</sup>: Եվրոպական սոցիալական գործընկերության և պատասխանատվության արժեքներն ու սկզբունքները վճռորոշ նշանակություն ունեն սոցիալական քաղաքականության սուբյեկտների ռազմավարության մշակման և բոլոր մակարդակներում որոշումներ ընդունելու գործընթացում<sup>4</sup>: Այստեղ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթը սոցիալական գործընկերության գործառության եղանակն է:

Սոցիալական պետության կարևորագույն սկզբունքներից է սոցիալական գործընկերության, սոցիալ-աշխատանքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունների կայացումը: Անցումային հասարակություններում առկա է որոշակի հակասություն սոցիալական գործընկերության սուբյեկտների կայացածության և դրանց շահերի իրականացման, միասնական իրավական կարգավիճակի ու հենքի միջև: Սոցիալ-տնտեսական և սոցիալ-աշխատանքային ոլորտներում սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների քաղաքացիավարական համակարգ է, որի արդյունավետ գործառնան համար առանցքային նշանակություն ունի գործառուների, գործատուների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շահերի փոխլրացչությունը (փոխսհամաձայնությունն ու փոխզիջումը): Սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ տեսակ է և դրանք կարգավորելու քաղաքացիավարական եղանակ, որը բնորոշ է սոցիալական պետությանը և սոցիալական երաշխիքներով շուկայական տնտեսություն ունեցող երկրներին: Սոցիալական գործընկերության, պա-

<sup>2</sup> **Տե՛ս Рассадина И. И.** Современные тенденции государственного регулирования рынка труда стран ЕС // «Вестник СПбГУ». Сер. 8. 2003. Вып. 1 (№ 8), էջ 126:

<sup>3</sup> **Даренский В. Ю.** Социальный диалог как онтологическая основа правовых отношений // "Вісник НТУУ "КПІ": Філософія. Психологія. Педагогіка", 2005, № 1.

<sup>4</sup> **Տե՛ս Щадилов Г. А., Рошина И. В.** Система менеджмента корпоративной социальной ответственности как условие формирования активного социально-экономического пространства // «Известия Томского политехнического университета». 2008. Т. 313, № 6, էջ 26:

տասխանատվության ու վերահսկողության ընթացակարգերով են պայմանավորված հասարակության քաղաքական համակարգի ու վարչակարգի կայացման քաղաքացիավարական նախադրյալները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացման երաշխիքները: Դրանց կառուցվածքային-գործառական ընթացակարգերն ամրագրվում են օրենսդրական և նորմատիվ ակտերում, պայմանագրերում, համաձայնագրերում և այլ փաստաթղթերում: Սոցիալ-գործընկերային հարաբերությունների պայմաններում հավանական, հնարավոր կամ իրական հակասությունները, հակադրություններն ու բախումները կարգավորվում են քաղաքացիավարական ընթացակարգերով: Այս առումով տեսական և գործնական նշանակություն ունի սոցիալական գործընկերության կայացման գործոնների և դրանց մեթոդաբանական հիմնահարցերի համակողմանի դիտարկումը:

Հասարակագիտական գրականության մեջ առկա են «սոցիալական գործընկերություն», «սոցիալական պատասխանատվություն», «սոցիալական վերահսկողություն», «սոցիալական առլիիտ», «սոցիալական կապիտալ», «կայուն սոցիալական զարգացում», «կորպորատիվ քաղաքացիություն» հասկացությունների բազմաբնույթ սահմանումներ: Այդ հասկացություններն օգտագործվում է «նեղ» և «լայն» ինաստներով, որոնք երբեմն հակադրվում, իսկ երբեմն էլ նույնացվում ու փոխլրացնում են միմյանց: Շատ հաճախ հիմնականում հղում են կատարվում սոցիալական գործընկերություններ, պատասխանատվություն և վերահսկողություն հասկացությունների նորմատիվային և ոչ ծևական սահմանումներին, որոնք անրագրված են ներպետական, տարածաշրջանային և միջազգային նորմատիվ ակտերում, հրչակագրերում, բանաձևերում, հանձնարարականներում և այլ փաստաթղթերում:

Առաջին անգամ սոցիալական գործընկերության, սոցիալական պատասխանատվության ու վերահսկողության հիմնահարցերը հանրային քաղաքականության օրակարգ մտան խոշոր արդյունաբերական երկրներում, որտեղ գգալի էին գործառուների ու գործառուների միջև առկա հակասություններն ու բախումները: Աշխատանքային ու արտադրական նմանատիպ բախումնածին հարաբերությունների պատճառով գգալի վնասներ էին կրում և գործառուները, և գործառուները, և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները: Մի շարք վերլուծաբանների կարծիքով՝ գիտատեխնիկական հեղափոխությունն արմատապես փոխեց արևմտյան հասարակությունների սոցիալական կառուցվածքն ու արտադրական գործընթացի մասնակիցների սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունները՝ էականորեն ուժեղացնելով վերջիններին դերն աշխատանքի արտադրողականության աճի և կառավարչական գործունեության մեջ<sup>5</sup>: Արդյունքում գգալի դարձավ սոցիալական գործըն-

<sup>5</sup> **Տես Մոդել Ի. Մ., Մոդել Բ. Ս.** Социальное партнерство в России // «Социс», 2000, № 9, էջ 42, **Оленцевич Н. В.** Социальное партнерство как институт современного рыночного хозяйства // Научные труды ДонНТУ. Серия: экономика. Выпуск 70, էջ 191, **Петрова Л. Е.** Объединения работодателей: потенциал в социальном партнерстве // «Экономическая социология», 2003, № 1(4), էջ 79, **Черныш М. Ф.** Противоречия становления социального партнерства // «Социс», 2004, № 6, էջ 16-17:

կերության տեղն ու դերը սոցիալ-աշխատանքային սուբյեկտների ինստի-  
տուցիոնալացման, հակասական տնտեսական շահերի համաձայնեցման  
և կայուն տնտեսական զարգացման գործընթացում<sup>6</sup>:

Ժամանակակից սոցիալական գործընկերությունը համարվում է  
սոցիալական խավերի ու խոչոր խմբերի միջև հարաբերությունների կար-  
գավորման արդյունավետ միջոց<sup>7</sup>, ինչը «մտածողության, սոցիալական հո-  
գեբանության նոր տեսակ է, որի կենտրոնում գտնվում են մարդը, համա-  
մարդկային արժեքները»<sup>8</sup>: Սոցիալական գործընկերության ընթացակար-  
գերն ապահովում են «սոցիալական բաժանված հասարակության տար-  
բեր խմբերի շահերի փոխկապակցվածությունը, փոխայմանավորվա-  
ծությունը քաղաքական կայունություն ձեռք բերելու նպատակով»<sup>9</sup>: Գիտե-  
լիքահենք տնտեսության պայմաններում սոցիալական գործընկերությու-  
նը ենթադրում է միջանձնային, միջխմբային, միջինստիտուտային և միջ-  
պետական մակարդակներում համագործակցություն, սոցիալական բա-  
խումների կարգավորում ու արդյունավետ սոցիալական քաղաքականու-  
թյան իրականացում: Սոցիալական գործընկերությունը պայմանավորված  
է նաև քաղաքական գործընկերության\*\*\* ու պատասխանատվության ըն-  
թացակարգերով, որովհետև քաղաքական ինստիտուտները, արժեքները,  
նորմերը և մշակույթն անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով  
կապված են սոցիալական կառույցների հետ:

Հասարակական հարաբերությունների առաջընթացով պայմանավոր-  
ված կարևորվում է սոցիալական գործընկերության ներկորպորատիվիս-  
տական մոտեցումը, որը ենթադրում է սոցիալական քաղաքականության  
սուբյեկտների միջև համագործակցություն, հարաբերություններ, վերա-  
հսկողություն, երկխոսություն, լուսագրության և այլական գործընկերությունը իմանականում սահմանվում է որպես «տնտե-  
սական և սոցիալական քաղաքականություն մշակող առանցքային սու-

<sup>6</sup> Տե՛ս Օլենցևիչ Հ. Վ., նշվ. աշխ., էջ 191:

<sup>7</sup> Տե՛ս «Политическая социология». М., 2000, էջ 117:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 121:

\*\* «Սոցիալական գործընկերությունը ոչ միայն գաղափարախոսական  
դոկտրին է, այլև ժամանակակից կապիտալի որոշակի քաղաքականություն: Այդ քաղաքականությունը իրականացվում է տարբեր մակարդակներում. ա-  
ռանձին աշխատակիցների և գործատումների միջև՝ ընթացող փոխհարաբերու-  
թյուններում, գործարարների, կազմակերպությունների և արիեստակցական  
միությունների միջև միկրոնակարդակում, քաղաքական կուսակցությունների,  
արիմիությունների և պետության, գործարարների և մասնագիտական միու-  
թյունների ու կառավարության միջև՝ մակրոնակարդակում» («Политическая  
социология», էջ 121):

\*\*\* «Քաղաքական գործընկերությունը քաղաքական ինստիտուտների,  
հասարակական կազմակերպությունների և շարժումների, դրանց առաջնորդ-  
ների միջև հարաբերությունների տեսակ է: Այսիսի համագործակցության  
նպատակն է քաղաքականության տարբեր սուբյեկտների շահերի հաշվառու-  
մը, համաձայնեցումն ու իրականացումը» («Политическая социология», էջ  
123):

բյեկտների միջև համագործակցություն»<sup>10</sup>: Այստեղ կարևորվում են արհմիությունների, գործատուների, պետության և սոցիալական այլ խմբերի միջև հնարավոր փոխարաբերություններն ու փոխգործակցությունը: Նմանատիպ փոխգործակցությունը նախապատրաստվում և ձևավորվում է առկա հիմնահարցերի համատեղ քննարկումների ու լուծումների շնորհիվ: Այստեղ քննարկվող հիմնահարցերը վերաբերում են նաև գործազուրկների ու կենսաթոշակառուների սոցիալական պաշտպանվածությանը, գործազրկության նպաստների ու կենսաթոշակների վճարման պայմաններին, որոնք, ըստ էության, դրւու են շուկայական տնտեսության ընթացակարգերից<sup>11</sup>: Ըստ այդմ, «գործընկերություն» և «երկխոսություն» հասկացություններն օգտագործվում են որպես հոմանիշներ՝ կարևորելով գործընկերության և երկխոսության մեթոդների, մակարդակների, ձևերի և կարգավիճակների հետ կապված խնդիրները: Այսինքն՝ խորհրդակցություններից ու բանակցություններից անցում համատեղ որոշումներ ընդունելու և համաշահադրդման:

Սոցիալական գործընկերությունը սահմանվում է նաև որպես ինստիտուտների, ընթացակարգերի և ձևաչափների համակարգ, որը կոչված է հանուն կորպորատիվ և համասցիալական նպատակների իրականացման ապահովելու աշխատանքի պայմանների ու վարձատրության բանակցություններին մասնակցող կողմների (գործատուների ու գործառուների) շահերի հավասարակշռություն՝ նպաստելով հասնելու փոխընդունելի փոխազիջման<sup>12</sup>:

Զ. Բենգսը, կարևորելով գործառուների սոցիալական անվտանգությունը, պաշտպանվածությունն ու ապահովությունը, սոցիալական գործընկերության համակարգում դիտարկում է հետևյալ երեք ընթացակարգերը՝ ռազմավարական միութենականության (strategic unionism), աշխատունակ գործընկերության (partnership working) և եվրոպական սոցիալական գործընկերության մոդելները, ինչպես նաև արհմիությունների և գործառուների ներգրավվածությունը հանրային ծառայությունների բարեփոխումներին<sup>13</sup>:

Ըստ Ե. Նեխոդայի՝ «Աշխատանքի միջազգային կազմակերպության փորձագետները սոցիալական գործընկերությունը սահմանում են որպես այնպիսի ընթացակարգ, որի օգնությամբ գործարարները, գործառուների և կառավարության ներկայացուցիչները փոխազիջումներ գտնելու ճանապարհով մշակում են համաձայնեցման և բազմաբնույթ հարցերի համալիր՝ լուծելով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները»<sup>14</sup>: Այստեղից էլ նա

<sup>10</sup> Casey B., Gold M. Social partnership and economic performance: the case of Europe. Edward Elgar Publishing Ltd., 2000, p. 10.

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9:

<sup>12</sup> Տե՛ս «Социальное партнерство: словарь-справочник». М., 1999, էջ 193:

<sup>13</sup> Տե՛ս Bangs J. Social Partnership: the wider context // FORUM, 2006, vol. 48, № 2, էջ 202-203:

<sup>14</sup> Нехода Е. В. Группы интересов в системе социального партнерства // «Вестник Томского государственного университета (Экономика)», 2008, № 1 (2), с. 17.

սոցիալական գործընկերության համակարգայնաստեղծ տարրը համարում է սոցիալ-աշխատանքային հարաբերությունների հիմնական մասնակիցների (պետություն, գործատու, գործառու) միջև սոցիալական երկխոսությունն ու փոխզիջումների փնտրումը<sup>15</sup>:

### **Սոցիալ-տնտեսական շահերի ներդաշնակեցումն**

#### **ըստ Ն. Վոլգինի և Ա. Կորյանովի<sup>16</sup>**

	Սոցիալական գործընկերության ուղղությունը	Սոցիալական գործընկերության սուբյեկտի պատասխանատվությունը (բնական)	Շահագրգիռ սոցիալական գործընկերության սուբյեկտի պատասխանատվությունը տարբեր ընթացակարգերով (արհեստական)	Բնական և արհեստական պատասխանատվության համադրության արդյունքը (շահագրգրվածություն)
1.	Պետություն	սոցիալական և տնտեսական	սոցիալական և տնտեսական պատասխանատվության և շահագրգրվածության ուժեղացում (գործառուների աշխատավարձի և ծեռնարկության շահութի ավելացման մեջ)	աշխատավարձի, ՅՆԱ-ի, հարկերի և մուտքերի ավելացում, բյուջեի համարում, սոցիալական կայունության պահպանում
2.	Գործառուներ	սոցիալական (աշխատավարձի ավելացում և սոցիալական այլ ցուցանիշներ)	տնտեսական (ծեռնարկության եկամուտների ավելացման մեջ)	սոցիալական և տնտեսական պատասխանատվություն և շահագրգրվածություն
3.	Գործառուներ	տնտեսական (ծեռնարկության շահութի և եկամուտների ավելացում)	սոցիալական (գործառուների աշխատավարձի ավելացման մեջ)	տնտեսական և սոցիալական պատասխանատվություն և շահագրգրվածություն

Ա. Պոգորելսկու կարծիքով, սոցիալական գործընկերությունը այն է, որ «ձեռներեցների ջանքերը կենտրոնանում են արդյունավետ աշխատատեղերի ստեղծման վրա՝ որա շնորհիվ ընդլայնելով ազգարնակչության զանգվածային գնողունակությունը»<sup>17</sup>: Այս գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ազգարնակչության ավելացած գնողունակությունն իր հերթին նպաստում է արտադրության ընդլայնմանը և համապատասխան ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը<sup>18</sup>: Միաժամանակ, սոցիալական գործընկերության համակարգի արդյունավետ գործառնան համար հրատապ նշանակություն ունեն նաև քա-

<sup>15</sup> Տե՛ս Խեօձ Ե. Վ., նշվ. աշխ., էջ 17:

<sup>16</sup> Տե՛ս Վոլգին Ի., Կօբյան Ա. Социальные факторы экономического роста: гармонизация интересов работников и работодателей достижима // «Человек и труд», 2005, № 2, էջ 33:

<sup>17</sup> Погорельский А. Социальный либерализм: перспективы в России // "Логос", 2004, № 6(45), с. 56.

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղոք:

ղաքական ընտրանու «բաց լինելու» հանգամանքը, «հորիզոնական» և «ուղղահայաց» շարժունակության կայացման նախադրյալները<sup>19</sup>: Ըստ Ա. Պոգորելսկու՝ «ձեռնարկատիրական և աշխատանքային ակտիվության բարձր արդյունավետությունը հնարավորություն է տալիս ապահովելու նարդկանց կյանքի արժանապատիվ մակարդակ»<sup>20</sup>:

Սոցիալական փոխակերպման գործընթացները սոցիալական պատասխանատվության բախումնածին նոր իրավիճակներ ստեղծեցին նաև քաղաքային ու գյուղական խոշոր, միջին և փոքր հանայնքներուն: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջվում էր մշակել ու իրականացնել բազմանակարդակ նոր սոցիալական քաղաքականություն: Եթե փոխակերպման սկզբնական մակարդակում փորձի պակասի առումով հասկանալի էին առաջացած սոցիալ-տընտեսական և սոցիալ-աշխատանքային դժվարությունները, ապա այժմ հանրային կառավարման պրակտիկայի հիմնա վրա անհրաժեշտ է զարգացնել քաղաքացիավարական գործընկերություններ: Դանրային ծառայության համակարգի չկայացածության, գործազրկության, գրադարձության ծավալների ու աշխատատեղերի կրծատման, բյուջեի դեֆիցիտի և ֆինանսական միջոցների անհավասար բաշխման, ժողովրդագրական և հասարակական նշանակության այլ հիմնախնդիրների կարգավորման համար մի շարք վերլուծաբաններ առաջարկում են կիրառել միջհատվածային սոցիալական գործընկերության (ՄՍԳ) <sup>\*\*\*</sup> ընթացակարգը: Ըստ Վ. Յակիմեցի՝ ՄՍԳ ընթացակարգը «երկու կամ երեք հատվածների ներկայացուցիչների (իշխանություն, բիզնես, հասարակություն) համատեղ մշակած կանոնների, եղանակների, տեխնոլոգիաների և փաստաթղթերի ամբողջությունն է՝ ըստ ա) կազմակերպման, բ) ռեսուրսների ապահովման և գ) համատեղ աշխատանքների իրականացման (նախագծերի, ձեռնարկների), որը ներառված է տվյալ տարածքի սոցիալական ոլորտի գործառնան աղյուսակում՝ սոցիալական նշանակալի հիմնահարցերը լուծելու և գործող նորմատիվ ու իրավական ակտերը հաշվի առնելու նպատակով, և հետագայում վերարտադրվելի է առանց ստեղծողմերի մասնակցության»<sup>21</sup>: Ըստ այդմ՝ նա ՄՍԳ-ի ընթացակարգերը բաժանում է

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղոք:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>\*\*\*</sup> Միջհատվածային սոցիալական գործընկերությունը (ՄՍԳ) երկու կամ երեք հատվածների կազմակերպությունների կառուցողական փոխգործակցությունն է (պետություն, բիզնես, ոչ առևտուրային հատված), որը «շահավետ» է տվյալ տարածքի բնակչության ու կողմերից յուրաքանչյուրի համար՝ սոցիալական հիմնահարցերի լուծման ընթացքում ապահովելով սիներգետիկական էֆեկտ տարբեր ռեսուրսների «համակցումից» (տե՛ս Յակիմեց Վ. Հ. Մежсекторное социальное партнерство (государство-бизнес-некоммерческие организации). М., 2002, Բոնդարչук Ե. Ա., Յակիմեց Վ. Հ. Մежсекторное социальное партнерство: объединение ресурсов бизнеса, власти и общества на территории МО (Местное самоуправление – новые технологии развития // Электронный журнал "Местное устойчивое развитие", 2010, № 1, էջ 4)):

<sup>21</sup> Յակիմեց Վ. Հ. Третий сектор в регионах России: особенности развития и взаимодействия с местной властью и бизнесом // "Регионы России: взаимодействие и развитие (междисциплинарный подход)". М., 2001.

հինգ խմբերի՝ մրցութային, սոցիալ-տեխնոլոգիական, կազմակերպական-կառուցվածքային, կառուցակարգային, համալիր<sup>22</sup>: Դրանք հնարավորություն են տալիս համապատասխան տարածքային միավորման սահմաններում իրականացնելու, ձևավորելու և վերահսկելու սոցիալական քաղաքականությունը՝ ապահովելով դրական արդյունքների վերարտադրելիություն, գործընթացների շարունակականություն ու քաղաքացիական կայունություն: Այս առումով կայուն սոցիալական գործընկերությունը տվյալ ազգ-պետության բոլոր երկրամասերի սոցիալական պաշտպանվածության ու ներդրումային քաղաքականության իրականացնան երաշխիքն ու արդյունքն է: Սոցիալական գործընկերությունն իր բնույթով ոչ միայն միջհատվածական է, այլև միջջուղային, միջկազմակերպական, միջանձնային, ռազմավարական, հեռանկարային, որովհետև միշտ նպատակառության է սոցիալական հրատապություն ունեցող որոշումների նախապատրաստմանը, ընդունմանը, իրականացնան ու վերահսկմանը: Յետևողականորեն «հատվածական» (հասցեական) ծրագրերի մասնակի կամ անբողական իրականացումը ձևավորում է գործողությունների սոցիալական փոխլրացուցչություն, կորպորատիվ քաղաքացիություն, համաքաղաքացիական սոցիալական կապիտալ ու նոր սոցիալական ներդրումների բարենպաստ միջավայր: Այդ իսկ պատճառով ՍՍԳ-ն համապատասխան բնագավառում (կրթություն, առողջապահություն, տուրիզմ և այլն) պետության, արհմիությունների, գործառուների, հասարակական կազմակերպությունների և անձանց համատեղ այնպիսի գործընկերություն է, որն ուղղված է տվյալ բնագավառում առկա կոնկրետ հիմնախնդիրների լուծմանը: Այսպես, օրինակ, սոցիալական գործընկերությունը մասնագիտական կրթության բնագավառում աշխատանքի շուկայի հնատիտուտների և սուբյեկտների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ տվյալ կրթական հաստատության փոխգործակցության առանձնահատուկ տեսակ է՝ նպատակառության առավելապես հանաձայնեցնելու և հաշվի առնելու այդ գործընթացի բոլոր մասնակիցների շահերը<sup>23</sup>: ՍՍԳ-ն նպաստում է տվյալ բնագավառի զարգացմանը, մրցունակության և շահութաբերու-

<sup>22</sup> Մանրամասն տես՝ **Якимец В. Н.** Создание работающих механизмов социального взаимодействия – шанс для возрождения России // "Профессионалы за сотрудничество", вып. 4, 2001, № 153-172, **Бюллетень** Социальное партнерство в России: исследования, механизмы, опыт // "Социальное партнерство. Российский опыт. Год 2000". СПб., 2001, № 30-72, **Бюллетень** Перспективы в ограничении межсекторного социального партнерства // "Социальное партнерство. Российский опыт. Год 2000". СПб., 2001, № 164-183:

<sup>23</sup> **Стру Глушанок Т. М.** Социальное партнерство как средство повышения качества профессионального образования // «Современные проблемы науки и образования. Педагогические науки», 2008, № 6, № 80, **Звзюлин Г. И.** Определяющая роль социальных партнерств в финансировании высших учебных заведений // «Научный журнал КубГАУ», № 23 (7), ноябрь, 2006, № 1-8, **Тощенко Ж. Т.** Предмет и структура социологии труда // «Социс», 2003, № 3, № 57, **Чечурова Ю. Ю.** Место и роль социальной ответственности в системе субъективных критериев организационной эффективности // «Современные проблемы науки и образования. Психологические науки», 2008, № 1, № 94-99:

թյան բարձրացմանը: Յաշվի առնելով ՄՍԳ-ի հանրային նշանակությունը՝ մի շարք վերլուծաբաններ պետությունը ներպետական մակարդակում համարում են մակրոգործընկեր, իսկ վերպետական մակարդակում՝ միջազգային կառավարական կազմակերպություններ՝ մեզագործընկերներ: Այստեղ հատկանշական է հանրային որոշումների ընդունման, տվյալ բնագավառի օրենսդրության և նորմատիվ ակտերի գործառնան, զարգացման չափորոշիչների ամրագրման, սոցիալական քաղաքականության նշակման և իրականացման գործընթացում պետության առանցքային դերակատարությունը:

Սոցիալական գործընկերությունը «ղեկավարության, աշխատանքային կոլեկտիվի, արհմիությունների և երբեմն նաև պետության ներկայացուցիչների փոխկապակցված գործողություններն են, որոնք նպատակաւողված են կազմակերպության մեջ սոցիալական կայունության պահպանմանը»<sup>24</sup>: Սոցիալական գործընկերությունը «ինքնուրույն կյանքի ռեսուրս է և արդյունավետ սոցիալական աշխատանքի կարևորագույն պայման»<sup>25</sup>: Գործընկերային հարաբերությունների մասնակիցների գործողություններն արդյունավետ են, եթե ապահովում են (նվազագույն կամ առավելագույն չափով) սոցիալական երկխոսության, պատասխանատվության, երաշխիքներն իրականացնելու և ծրագրելու ընթացակարգերը: Գործընկերային հարաբերություններն անարդյունավետ են, եթե մասնակիցների գործողությունները խաթարում են սոցիալական կայունությունը՝ հանգեցնելով սոցիալական լարվածության, հակամարտությունների, ընդհարումների, տարածայնությունների առաջացմանն ու խորացմանը: Սոցիալական գործընկերները փոխակերպվում են հակամարտողների, եթե նրանցից յուրաքանչյուրը գործում է՝ անտեսելով սոցիալական քաղաքականության մյուս սուբյեկտների իրավունքներն ու ազատությունները:

Սոցիալական գործընկերությունն արտադրական գործընթացի մասնակիցների (գործատուների և գործառուների) շահերը համաձայնեցնելու ինստիտուտների ու ընթացակարգերի համակարգ է<sup>26</sup>: Սոցիալական գործընկերության իրականացման տարբեր եղանակներն ու մակարդակները շուկայական տնտեսության սոցիալական ուղղվածության վկայությունն են և անքակտելի քաղադրատարը: Սովորաբար սոցիալական գործընկերության համակարգում, եթե հանրային շահերի գերակայության երաշխավորը պետությունն է, ապա գործառուների շահերի, իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրականացնողն արհմիություններն են, իսկ գործատուներինը՝ գործարարների ու արդյունաբերողների ընկերակցությունները: Մասնագիտական գրականության մեջ սովորաբար դիտարկվում է սոցիալական գործընկերության «եռակողմ» նորելը, որը, սակայն, չսահնանափակվելով այդ ձևաչափով, ենթադրում է նաև հանրային քաղաքաբնույթ սուբյեկտների ներգրավվածություն, մասնակցություն ու հա-

<sup>24</sup> «Социология и психология труда: учебное пособие». Ч. 1. М., 2008, с. 314.

<sup>25</sup> Ярская-Смирнова Е. Р., Наберушкина Э. К. Социальная работа с инвалидами. СПб., 2004, с. 220.

<sup>26</sup> Стёу Силин А. Реформа Трудового кодекса и мировой опыт // «Человек и труд», 2000, № 2:

мнагородаваկցություն: Այս առունով այն բազմակողմ է, որի մասնակիցներն անմիջական կամ միջնորդավորված ազդում են սոցիալական գործընկերության համակարգի գործառության վրա:

Անցունային հասարակություններում արդյունավետ փոխադարձ վերահսկողությունը նպաստում է սոցիալական ինտեգրացիային՝ ապահովելով փոխադարձ պատասխանատվության մշակույթ ու ընթացակարգ: Զարգացած հասարակություններում փոխադարձ վերահսկողության ընթացակարգը հանրային կյանքի բոլոր ոլորտներում ապահովում է սոցիալական ուղղվածության մշակման և իրականացման գործընթացում «եռակողման» ձևաչափը ենթադրում է շահերի փոխհամաձայնեցում, որի իրականացման գործիքներից են բանակցություններն ու հանրային քննարկումները: Արհմիտությունների, գործառումների ընկերակցությունների և պետության միջև քննարկվում և փոխհամաձայնեցվում են աշխատանքի կազմակերպմանն ու պայմաններին, աշխատանքի վարձատրությանը, սոցիալական երաշխիքներին, աշխատանքային իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին վերաբերվող հարցեր: Այս ձևաչափը բարենապաստ պայմաններ է ստեղծում մարդակենտրոն սոցիալական քաղաքականության իրականացման համար: Զարգացած սոցիալական գործընկերության համակարգը<sup>27</sup> համահասարակական գաղափարախոսություն է: Ինչը ենթադրում է կորպորացիաների և այլ բիզնես հաստատությունների կամավոր ստանձնած պարտականություններն ու պատասխանատվությունը հասարակության տարրեր շահագիրգիր խմբերի նկատմամբ: Դասարակարար սոցիալական քաղաքականության շնորհիվ բիզնեսը ձեռք է բերում հանրային վատահություն՝ ապահովելով հանրային շահերի ու արժեքների գերակայություն և ձևավորելով սոցիալական պատասխանատվության մշակույթ:

Կատարված գործողություններն ու իրականացված ծրագրերը նպաստում են ոչ միայն բիզնեսի մրցունակության բարձրացմանը, այլև սոցիա-

<sup>27</sup> **Տես Մалиնин Е. Д.** О социальной ответственности предпринимателей // «ЭКО», 2000, № 11, էջ 163, **Страхая Е. И., Харитонова Л. К.** Социальная ответственность власти и бизнеса // «Пути формирования эффективной социально-экономической модели трансформирующейся России». Сборник статей Всероссийской научно-практической конференции. СПб., 2005, էջ 23, **Султанова Л. И.** Теоретические основания исследования категории социальной ответственности «Вестник Башкирского университета». 2009. Т. 14. № 1, էջ 246-249, **Якимец В. Н.** Межсекторное социальное партнерство: основы, теория, принципы, механизмы. М., 2004, էջ 246-247:

լական կապիտալի ձևավորմանը: Դրանք իրենց ձևաչափով ու նշանակությամբ *սոցիալական ներդրումներ են*:

Զարգացած շուկայական տնտեսության երկրների փորձը և հետազոտությունները վկայում են, որ առկա է ուղղակի կապ ընկերության սոցիալական արժեքների, հեղինակության և արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների) նկատմամբ կայուն պահանջարկի միջև, ինչպես նաև դրական կոռելացիա՝ ֆինանսատնտեսական գործունեության և տնտեսական սուբյեկտների սոցիալական ակտիվության միջև: Այդ իսկ պատճառով տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացի պայմաններում սոցիալական ատիվությունն ու «կորպորատիվ քաղաքացիությունը» դառնում են բիզնես-ծրագրերի անքաղտելի մասը՝ մեծացնելով կորպորատիվ սոցիալական ներդրումների ծավալն ու կայունությունը:

Սոցիալական ուղղվածությամբ ծախսերի մակարդակի գմահատման չափանիշ կարող է լինել  $K_{SC}$  գործակիցը<sup>28</sup>, որն արտացոլում է բիզնեսի սոցիալական ուղղվածությունը՝

$$K_{SC} = \frac{SC}{CP}$$

«որտեղ SC-ը (social charges) «սոցիալական ծախսերն են», որոնք կապված են հասցեագրված լրացուցիչ վճարումների հետ՝ ըստ սոցիալական ոլորտի օբյեկտների, CP-ը (charges for the period) այն ծախսերն են, որոնք ձևավորում են ձեռնարկության գործունեության ֆինանսական արդյունքը որոշակի ժամանակահատվածում»<sup>29</sup>:

Սոցիալական ներդրումները կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացման եղանակներն են, որոնք ենթադրում են հասարակության կայուն զարգացում, հասարակության անդամների կյանքի որակի և կենսամակարդակի բարձրացում՝ քավարարելով նրանց նյութական, հոգևոր-մշակութային, սոցիալական կամ քաղաքացիավարական պահանջնությունը: Բիզնեսի սոցիալական կողմնորոշվածությունն ունի իր մշակութային, քաղաքացիավարական և տնտեսական առավելություններն ու նշանակությունը, որը հանրային «հիպերսոցիալականցման» արդյունք է: Այս համատեքսուում բիզնեսի սոցիալական պատասխանատվությունն ու սոցիալական ներդրումները սոցիալական գործընկերության համակարգի գործիքներն են, որոնք հանրային ենթակառուցվածքների կենսունակության (հանախմբվածության, հավաքականության) ապահովման ու ինտեգրման ներուժն են:

Հասարակաբար սոցիալական քաղաքականության զարգացման գործընթացում ձևավորվել են բիզնեսի սոցիալական պատասխանատվության երկու հիմնական մորելեներ՝ անգլո-ամերիկյան (սոցիալական աջակցության հիմնադրամների ու աշխատատեղերի ստեղծում, աշխատանքային պայմանների բարելավում և այլն) և գերմանական (պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ դերակա-

<sup>28</sup> **Տե՛ս Խարիտոնova Ն. A., Խարիտոնova Ե. H.** Оценка экономической эффективности социальной деятельности предприятия // «Фундаментальные исследования», 2005, № 1, էջ 82:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 82-83:

տարում, բարձր հարկերի վճարում, արդյունավետ սոցիալական ապահովություն և այլն):

Հետխորհրդային հասարակություններում սոցիալական գործընկերության համակարգի կայացման համար բացասական ազդեցություն ունեն հետևյալ գործուները՝ աշխատանքի շուկայի չկայացածությունը, համապատասխան բնագավառներում գործատուների միավորումների բացակայությունը, արհմիությունների համախմբվածության բացակայությունը, աշխատանքային պայմանագրերի ձևական բնույթը, պետություն-արհմիություններ-գործատուների փոխհարաբերությունների անբավարար նակարդակը: Տեղին է նշել, որ հետխորհրդային սոցիալական գործընկերության սկզբնական փուլում իրատապ նշանակություն ունի վերջինիս սուբյեկտների շահերի հաշվառումը: Սոցիալական զարգացման հաջորդ փուլում այն կնպաստի սոցիալական գործընկերության սուբյեկտների տարաբնույթ շահերի միջև բախումնային իրավիճակների կարգավորմանն ու փոխլրացնող քաղաքականության իրականացմանը: Այս փուլում բազմակողմանի և երկողմանի (երբեմն նույնիսկ՝ միակողմանի) որոշումների ընդունման համար էական նշանակություն ունի երկխոսությունը տվյալ բնագավառում: Պատահական չէ, որ սոցիալական գործընկերությունը զարգացած երկրներում կրթության և գիտության ֆինանսավորման (պետպատվեր, աշխատանքի շուկա, մասնագիտությունների ցանկ, որակյալ կադրեր, մրցունակ գիտություն և այլն) արդյունավետ ընթացակարգ է:

Այսպիսով, քաղաքացիավարական են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնք սոցիալական քաղաքականության սուբյեկտների միջև բանակցությունների, երկխոսության ու փոխգիծումների միջոցով ապահովում են կորպորատիվ պատասխանատվություն ու վերահսկողություն, սոցիալական ներդրումներ ու սոցիալական կապիտալ, մարդկային կյանքի որակ ու անվտանգություն: *Ոչ քաղաքացիավարական են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնցում դեռևս կայացման փուլում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սուբյեկտներն ու ընթացակարգերը, իսկ հակաքաղաքացիավարական (հակացիվիլիարժիկ) են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնցում բացակայում կամ «արգելափակվում» են գործընկերության պատասխանատվությունն ու վերահսկողությունը: Դրա հետևանքով խորանում են սոցիալական անվտանգությունն ու անպաշտպանվածությունը, որոնք ոչ միայն հանգեցնում են գործընկերային հարաբերությունների ձևախեղմանը, այլև վտանգում են քաղաքացիավարական կայունությանը:*

**АШОТ АЛЕКСАНЯН – Социальное партнерство в системе цивилиархической социальной ответственности.** – После распада СССР началось становление новой цивилиархической системы, а также процесс трансформации политических, социально-экономических и трудовых отношений и институтов. Экономические, социально-политические и духовно-культурные процессы сформировали новые механизмы конкуренции и сотрудничества. Рост бедности и безработицы, приватизация государст-

венной собственности и стратификация общества обострили социальные проблемы и привели к гражданскому недоверию и напряженности. Социальное партнерство выступает в качестве эффективного механизма социальной ответственности, инвестиции, контроля и аудита. Доминирующая роль бизнеса в постсоветских странах актуализирует эту проблему; социальное партнерство способствует устойчивому человеческому развитию. На этой основе становятся возможным цивилиархический менеджмент, корпоративное гражданство, гуманизация общественных отношений, рост социальных инвестиций и развитие социального капитала.

**ASHOT ALEKSANYAN – *Social partnership in the system of civiliarthic social responsibility.*** – After the collapse of the Soviet Union, a new civiliarthic system began to form, and political, social-economic, social-labour relations and institutions underwent some transformations. Economic, social, political and cultural processes formed new mechanisms of competition and co-operation. The rise in poverty and unemployment, the privatization of state property and social stratification intensified social problems and led to social-economic tensions and civil mistrust. Social partnership serves as an effective mechanism for social responsibility, social investment, social control, and auditing. At the present stage of globalization, the dominant role of business in post-Soviet countries places great weight on the establishment of social partnership. In a changing environment, social partnership is capable of achieving human sustainable development, due to which civiliarthic management, corporate citizenship, the humanization of social relations and growth of social investment and development of social capital become possible.